

ՕՐԵՆՔՈՎ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՅՑԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱՎԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝

Գոհար Ավագյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Դատական պաշտպանության հնարավորության օրենսդրական երաշխիքները վարչական դատավարությունում օրենքի գերակայության և արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախադրյալներն են:

Սահմանադրությունը² երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Դատարանում իրավունքների պաշտպանության միջոցը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի³ (այսուհետ նաև՝ ՎԴՕ) 65-րդ հոդվածի, անձի կողմից ներկայացվող հայցն է, որը գործի հարուցման հիմքն է:

Վարչական հայցի բնորոշումներում ընդհանուր գիծը կապվում է հայցապահանջի բնույթի հետ⁴: Քննարկելով հայցի և հայցատեսակի հարաբերակցության հարցը՝ կարող ենք եզրահանգել, որ ՎԴՕ 3-րդ հոդվածը, սահմանելով վարչական դատարան դիմելու իրավունքը (*ովքե՞ր, ո՞ր դեպքերում և ի՞նչ հիմքերով կարող են դիմել վարչական դատարան*), ըստ էության սահմանում է հայցապահանջների այն շրջանակը, որը կարող է ներկայացվել վարչական դատարան: ՎԴՕ 65-րդ հոդվածը գործի հարուցման հիմք է դիտարկում հայցը, ՎԴՕ 12-րդ գլուխը, սահմանելով գործի հարուցման հիմքը և հայցի տեսակները, սահմանափակում է դատարան դիմելու անձի իրավունքը հստակ հայցատեսակներով, որոնք կարող են ներկայացվել վարչական դատարան: Արդյունքում ստացվում է, որ անձն ունի վարչական դատարան դիմելու իրավունք՝ սահմանված հայցապահանջների շրջանակով, սակայն որոշ հայցապահանջներով սահմանված չէ օրենսդրական գործիքակազմ (բացակայում են հայցապահանջներին համապատասխանող հայցատեսակները), որը կերպաշխավորի անձի՝ դատարան դիմելու իրավունքի իրացումը:

Այսպես՝ ՎԴՕ 3-րդ հոդվածով սահմանված մի շարք հայցապահանջներ չեն համապատասխանում ՎԴՕ-ով սահմանված չորս հայցատեսակներին, ինչը փաստացի անձին զրկում է այն իրավական գործիքակազմից, որով կարող է իրացվել դատարան դիմելու նրա իրավունքը: Սույն խնդիրն ունի երկու հիմնական ասպեկտ՝ 3-րդ հոդվածով սահմանված վարչական մարմինների և պաշտոնատար անձանց իրավունքը՝ դիմելու վարչական դատարան՝ օրենքով սահմանված հիմքերով, մյուս կողմից՝ մասնավոր սուբյեկտների իրավունքների սահմանափակումն այն հայցապահանջներով, որոնք չեն համապատասխանում սահմանված հայցատեսակներին:

ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է ֆիզիկական կամ իրավաբան-

¹ Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

² Ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 6-ին: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

³ Ընդունվել է 2012 թ. մայիսի 5-ին: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

⁴ Տե՛ս **Зеленцов А.Б.**, // *Понятие и виды административного иска*//, Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. - М.: Изд-во РУДН, 2005, № 1 (17). - էջ 19-27:

նական անձանց իրավունքը՝ դիմելու վարչական դատարան, մեծապես համապատասխանում է հայցատեսակների բովանդակությանը: Նույն հոդվածի 2.1-րդ, 4-րդ և 6-րդ մասերով սահմանված գործերը քննվում են հատուկ վարույթի ընթացակարգով, իսկ 2-րդ մասով դատարան դիմելու իրավունք է տրված նաև վարչական մարմիններին կամ պաշտոնատար անձանց հետևյալ դեպքերում՝

➤ *Ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը.*

➤ *Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին.*

➤ *ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:*

Վերոշարադրյալից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրը մի կողմից իրավունք է տվել վարչական մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ դիմելու վարչական դատարան որոշակի անձի վրա որևէ պարտականություն դնելու պահանջով կամ նույնիսկ ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի, եթե առկա է իրավասության վերաբերյալ վեճ, իսկ մյուս կողմից չի նախատեսել նրանց այդ իրավունքի իրացման համար համապատասխան հայցատեսակ: Նշված պահանջները չեն համապատասխանում ՎԴՕ-ով նախատեսված ոչ մի հայցատեսակի: Պրակտիկայում դատարաններն ընդունում են նման հայցերը և քննում դրանք՝ հիմնվելով ՎԴՕ 3-րդ հոդվածով այդ անձանց համար սահմանված իրավունքի վրա: Հաշվի առնելով այն, որ նման դեպքերում առկա չէ որևէ հայցատեսակ նման հայցերի համար, ըստ էության սահմանված չեն նաև հայցի ներկայացման ժամկետներ: Արդյունքում անհավասար իրավիճակ է ստեղծվում ֆիզիկական ու իրավաբանական անձանց և վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցատեսակների միջև, քանի որ վերջիններիս դեպքում որևէ սահմանափակում ժամկետային և բովանդակային առումով առկա չէ: Ստացվում է՝ մի կողմից խախտվում է արդար դատաքննության իրավունքը, մյուս կողմից՝ կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Սույն խնդրի լավագույն լուծումը, կարծում ենք, ՎԴՕ 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով հատուկ վարույթի սահմանումն է ՎԴՕ-ում՝ հստակ ընթացակարգով և ժամկետների սահմանմամբ, ինչը կբացառի կողմերի նկատմամբ դատավարական կանոնների խտրական կիրառելիությունը:

Զնայած այն հանգամանքին, որ 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը մեծապես համապատասխանում են ՎԴՕ-ով սահմանված հայցատեսակներին, այդուհանդերձ պրակտիկայում քիչ չեն նաև այն դեպքերը, երբ ֆիզիկական անձինք դիմում են դատարան՝ հանրային վեճի շրջանակներում, սակայն վերջիններիս պահանջը չի համապատասխանում սահմանված հայցատեսակներին (օրինակ՝ էլեկտրոնային աճուրդների վիճարկման պահանջը): Եվ եթե վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցապահանջներով հատուկ վարույթի սահմանումը կարող է որպես ունիվերսալ լուծում ծառայել, ապա սույն խնդրի պարագայում հնարավոր չէ սահմանել հնարավոր բոլոր հայցատեսակները կամ կիրառել հատուկ վարույթի կարգով քննություն:

Սույն համատեքստում ճանաչման հայցատեսակը կարող է դիտարկվել որպես հնարավոր լուծում իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերի մասով, սակայն ոչ բոլոր հայցապահանջներն են, որ ենթադրում են իրավահարաբերության առկայություն կամ բացակայություն, ինչի վառ օրինակն է էլեկտրոնային աճուրդների վիճարկման հայցապահանջով ՎՃՁաբեկ դատարանի եզրակացությունն առ այն, որ գործը պետք է քննվի վիճարկման հայցատեսակի կանոններով:

Այսպես, **Վճռաբեկ դատարանը**¹ ընդգծել է, որ *հայցի տեսակների՝ «Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադատությունից հրաժարվելու համար*: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես դատավարական նորմերի մեխանիկական ընկալման և կիրառման հետևանք, ինչի պատճառով խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը²:

Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունն առ այն, որ կոնկրետ հայցատեսակին համապատասխանությամբ պայմանավորված չպետք է որոշվի գործի հարուցումը դատարանում, միանշանակ միտված է անձի՝ արդար դատաքննության իրավունքի իրացման պայմանների երաշխավորմանը: Սակայն միևնույն ժամանակ առաջարկված լուծումը չի կարող միանշանակ լինել, քանի որ, ինչպես փաստում է ՄԻԵԴ պրակտիկան, կիրառվող միջոցները չպետք է այնքան ճկուն լինեն, որ հնարավորություն ստեղծեն տարաբնույթ մեկնաբանությունների:

Այսպես, Վճռաբեկ դատարանն այս համատեքստում ընդգծում է այն հանգամանքը, որ նման իրավիճակների առաջացումը պայմանավորված է այնպիսի գործոնով, ինչպիսին է հասարակական հարաբերությունների դինամիկ բնույթը, այլ կերպ ասած՝ հասարակական հարաբերությունների անընդմեջ զարգացումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերոգրյալն օրենսդրին հնարավորություն չի տալիս ի սկզբանե կանխատեսել բոլոր հնարավոր իրավիճակները, ինչն իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջացնել տարաբնույթ իրավական փակուղիներ: Նման պայմաններում **Վճռաբեկ դատարանը գտել է**, որ *իրավակիրառ պրակտիկան պետք է ձևավորվի հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ ուղղված լինելով ոչ միայն անձի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, այլև իրավունքի գերակայության համընթացության ապահովմանը*: Հետևաբար, **Վճռաբեկ դատարանն** արձանագրել է, որ հանրային իրավահարաբերություններից բխող, սակայն «Վ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների կամ հատուկ վարույթների կարգով քննությանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վեճերը ևս պետք է քննվեն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի պահպանմամբ: Այսինքն, դատարանը կարող է որոշել, թե որ հայցատեսակին բնորոշ կանոնների կիրառումը կարող է առավելագույնս արդյունավետորեն ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնումը՝ ապահովելով դատարանի մատչելիության իրավունքը, մասնագիտացված արդարադատության նպատակայնությունը և սուբյեկտիվ իրավունքների ճիշտ պաշտպանության համար անհրաժեշտ և բավարար իրավական գործիքակազմը³:

Սակայն այս մոտեցումը, որքան էլ ժամանակավոր լուծում հանդիսանա, մի կողմից չի լուծում ժամկետների խնդիրը, ավելին՝ պարտավորեցնում է անձին նախապես կանխորոշել գործի քննության հնարավոր ռեժիմը և պահպանել այդ ժամկետները, մյուս կողմից՝ մեծացնում է նույնանման գործերով տարաբնույթ պրակտիկայի ձևավորման հավանականությունը՝ հաշվի առնելով դատարանին տրված չափից դուրս լայն լիազորության շրջանակը: Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ ներկայիս գործող կարգավորումները թույլ չեն տալիս հայցատեսակներից դուրս գործի հարուցումը վարչական դատարանում, իսկ դատավարական նորմերի անալոգիան արգելված է, հետևաբար օրենսդրական փոփոխությունների խնդիրը հրա-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/10875/05/18 վարչական գործով 10.10.2022 թ. որոշումը:

² Տե՛ս Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/10875/05/18 վարչական գործով 10.10.2022թ. որոշումը:

տապ է ոչ միայն պրակտիկայում, այլև գիտական մակարդակում՝ հայցի ինստիտուտի լիարժեք կարգավորման, հայց, հայցատեսակ և հայցապահանջ կատեգորիաների հստակ տարբերակման և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման համատեքստում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է արդար դատաքննության սկզբունքի իրացման նախապայմաններին՝ ընդգծելով, որ *չի կարող լինել իրավունք, առանց դրա իրացման օրենսդրական պատշաճ երաշխիքների*։ Սույն որոշման համատեքստում է, որ Վճռաբեկ դատարանը լայն մեկնաբանություն է տալիս հայցի ինստիտուտի կիրառմանը վարչական դատավարությունում՝ օրենսգրքով սահմանված հայցատեսակներից դուրս, սակայն Վճռաբեկ դատարանի կողմից տրված լուծումները միանշանակ չեն, իսկ առկա օրենսդրական բացը հնարավորություն է տալիս իրավունքի տարաբնույթ մեկնաբանությունների, խախտում է իրավական որոշակիության սկզբունքը և զրկում անձին՝ արդար դատաքննության մաս հանդիսացող այնպիսի կարևոր երաշխիքներից, ինչպիսիք են գործի քննության ռեժիմի կանխատեսելիությունը, դատավարական ժամկետների հստակ իմացությունը և պահպանման հնարավորությունը, կողմերի իրավահավասարությունը:

ՄԻԵԴ պրակտիկան սույն համատեքստում ցույց է տալիս, որ

1. *Ղատարան դիմելու անձի իրավունքի սահմանափակումը ինքնանպատակ չէ, սակայն պայմանները, որոնք օրենսդիրը նախատեսում է, պետք է հստակ լինեն կողմերի համար և չառաջացնեն ֆիկտիվ սահմանափակումներ՝ զրկելով անձին ղատարան դիմելու իրավունքի իրացման հնարավորությունից*¹: Սույն մեկնաբանությունից հետևում է, որ եթե օրենսդրությունը նախատեսում է հայցապահանջի բովանդակության համապատասխանելիությամբ պայմանավորված գործերի ընդհատություն վարչական դատարանին, այս հնարավորությունը չպետք է սահմանափակման ենթարկվի՝ պայմանավորված հայցատեսակների սակավաթվությամբ, եթե անձի կողմից ներկայացված հայցադիմումի առարկան չի համապատասխանում հայցատեսակներից և ոչ մեկին:

2. *Ղատարան դիմելու անձի իրավունքի սահմանափակումները համատեղելի կլինեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի իրացման պայմանների հետ միայն այն դեպքում, եթե դրանք չեն սահմանափակում կամ նվազեցնում դատավարության կողմի՝ ղատարան դիմելու իրավունքն այնքանով, որ խաթարվի այդ իրավունքի բուն էությունը. վերջապես, նման սահմանափակումները համատեղելի չեն լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե դրանք չհետապնդեն օրինական նպատակ, կամ եթե խաթարված լինի կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև ողջամիտ-համաչափ հարաբերակցությունը*²: Սույն դեպքում ակնհայտ է, որ հայցատեսակի մեխանիզմը կիրառվում է՝ որոշելու համար այն իրավական ռեժիմը, որով քննության է ենթարկվելու գործը դատարանում, սակայն այն ինքնին չի կարող որոշել՝ գործը առհասարակ հարուցման ենթակա է դատարանում, թե ոչ: Միջազգային փորձը նույնպես զալիս է փաստելու, որ այդ դեպքում կիրառման է ենթակա միայն վեճի բնույթով պայմանավորված գործի հարուցումը:

3. ՄԻԵԴ պրակտիկան նաև ընդգծում է, որ *թեև հայց ներկայացնելու իրավունքը անշուշտ ենթակա է օրենսդրական պահանջների խիստ պահպանմանը, դատարանները պարտավոր են կիրառել դատավարության կանոնները՝ խուսափելով և՛ չափից դուրս ձևականությունից, որը կխաթարի արդարադատության բուն*

¹ St'u Freitag v. Germany, no. 71440/01, § 35, 19 July 2007; and Stanev v. Bulgaria [GC], no. 36760/06, § 230, ECHR 2012:

² St'u Freitag v. Germany, no. 71440/01, § 35, 19 July 2007; and Stanev v. Bulgaria [GC], no. 36760/06, § 230, ECHR 2012:

էութիւնը, և՛ չափից ավելի ճկունութիւնից, որը թույլ կտա օրենսդրության տարաբնույթ մեկնաբանություններ¹: Փաստորեն, դատարանի՝ ի պաշտոնէ մասնակցության էությունը խաթարվում է, երբ կանոնները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտ են դատական պաշտպանություն ստանալու համար²: Հաշվի առնելով վարչական դատարանի կարգավիճակային առանձնահատկությունը՝ մեր կողմից ընդունելի է այն մոտեցումը, որ դատարանը կարող է և պետք է որոշի այն իրավական ռեժիմը, որով քննության առարկա պիտի դարձնի կոնկրետ հայցապահանջը, սակայն ընդունելի չէ մոտեցումն առ այն, որ դրանք անպայմանորեն պետք է համապատասխանեցվեն ՎԴՕ սահմանած հայցատեսակներից որևէ մեկին՝ հաշվի առնելով թե՛ ժամկետների խնդիրը և թե՛ հայցապահանջների բովանդակային տարբերությունը, թե՛ դատարանների կողմից հնարավոր տարաբնույթ մեկնաբանությունները, ինչը կստեղծի մի իրավիճակ, երբ նույնական փաստական հանգամանքներով գործը դատարանում կարող է քննվել տարբեր հայցատեսակների ռեժիմներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան դատավարական ժամկետների մասով հստակ ընդգծում է, որ օրենքով սահմանված ժամկետում դատարան հայց ներկայացնելու պահանջն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Դատարանը բազմիցս ընդգծել է, որ նման պահանջը հետապնդում է արդարադատության պատշաճ իրականացման և, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելու օրինական նպատակ³: Սույն դեպքում ժամկետների անհստակությունը առաջացնում է տարբերակված մոտեցում մի կողմից՝ պայմանավորված դատարան դիմող սուբյեկտով (մասնավոր անձանց համար ժամկետներ սահմանված են, իսկ պետական մարմինների դեպքում՝ ոչ), մյուս կողմից՝ չսահմանելով ժամկետներ՝ խախտվում է հենց այդ կողմի դատավարական իրավունքը, քանի որ չի բացառվում հնարավոր այն ելքը, երբ դատարանը որոշում կայացնի որևէ հայցապահանջ քննելու, օրինակ, վիճարկման հայցատեսակի ռեժիմով, իսկ արդյունքում պահպանված չլինեն այդ հայցատեսակի համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները: Փաստորեն, ստացվում է մի իրավիճակ, երբ անձը, հստակորեն իմանալով, որ իր կողմից ներկայացված հայցապահանջը չի համապատասխանում վիճարկման հայցատեսակի ռեժիմին, այդուհանդերձ կզրկվի դատարան դիմելու իր իրավունքի իրացումից, քանի որ դատարանը որոշում է կայացրել, որ իր կողմից ներկայացված հայցապահանջը ամենամոտն է հենց այդ հայցատեսակին, և իր վրա հետադարձ ուժով փաստացի կզրկվի պարտականություն՝ պահպանելու այս հայցատեսակի դատավարական ժամկետներն այն պայմաններում, երբ իր հայցապահանջի էությունն այլ է: Նմանատիպ իրավիճակները ոչ միայն հակասության մեջ են անձի դատավարական իրավունքների հետ, այլ ուղղակիորեն խախտում են իրավական որոշակիության սկզբունքը՝ զրկելով անձին իր իրավունքների կանխատեսման հնարավորությունից:

Փաստորեն՝ միանշանակ է, որ հայցատեսակների սահմանափակումը չպետք է խոչընդոտի անձի՝ դատավարական պաշտպանություն ստանալու իրավունքի իրացումը, սակայն մյուս կողմից պարզ է նաև, որ օրենսդիրն օբյեկտիվորեն չի կարող նախատեսել հնարավոր բոլոր հայցատեսակները: Որքան էլ ՎԴՕ-ով նախատեսված հայցատեսակներն ունենան ընդգրկուն բնույթ, այդուհանդերձ կարող են ծագել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճեր, որոնք առերևույթ կարող են չհամապատասխանել ՎԴՕ-ով սահմանված հայցի տեսակներին ներկա-

¹ St' u Walchli v. France, no. 35787/03, § 29, 26 July 2007:

² St' u Efsthathiou and Others v. Greece, no. 36998/02, § 24, 27 July 2006:

³ St' u Pérez de Rada Cavanilles, cited above, § 45, and Miragall Escolano and Others v. Spain, no. 38366/97, § 33, ECHR 2000-I:

յացվող պահանջներին:

Միջազգային լավագույն փորձը նույնպես միանշանակ չէ այս հարցում. վարչական հայցերի դասակարգումը ոչ բոլոր երկրներին է հատուկ¹: **Գերմանիայի վարչական դատավարության օրենսգիրքը**² սահմանում է երեք հստակ հայցատեսակ՝ վիճարկման, պարտավորեցման և ճանաչման: Սակայն օրենսդրությունը դատարան դիմելու իրավունքը պայմանավորում է հայցի առարկայի բովանդակությամբ՝ պայմանավորված վեճի բնույթով, ինչը ենթադրում է, որ օրենսդրությունը չի սահմանափակում անձին՝ դատարան դիմել այլ հայցապահանջներով:

Վրաստանի վարչական դատավարության օրենսգիրքը³ մոտ է ՀՀ ՎՂՕ-ին, սահմանում է 4 հայցատեսակ, սակայն այս դեպքում վիճարկման հայցի առարկան կարող է լինել ոչ միայն վարչական ակտի անվավերության, այլև այն ուժը կորցրած ճանաչելու պահանջը⁴: Սակայն Վրաստանի օրենսդրությունը 2-րդ հոդվածով նախատեսում է այն իրավահարաբերությունները, որոնցից առաջացած վեճերը քննության են ենթակա վարչական դատարանում:

Ղազախստանի վարչական դատավարության օրենսգիրքը⁵ քննարկվող համատեքստում ամենամոտն է ՀՀ օրենսդրությանը: 131-րդ հոդվածը նախատեսում է գործի հարուցման հիմքը՝ հայցը, իսկ հայցատեսակները հստակ սահմանված չորսն են՝ վիճարկման, գործողության կատարման, պարտավորեցման և ճանաչման:

Ուկրայինայի⁶ և Ռուսաստանի Ղաշնության⁷ վարչական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում հայցի առանձին տեսակներ, սակայն եթե Ուկրայինայի վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ հանրային իրավական հարաբերություններից բխող վեճերի դեպքում ներկայացվում է ընդհանուր հայց՝ վեցամսյա ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին, ապա Ռուսաստանի Ղաշնության վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը սահմանում է այն պահանջների շրջանակը, որոնք կարող են ներկայացվել վարչական հայցի շրջանակներում⁸:

Համադրելով ՀՀ փորձը միջազգայինի հետ՝ կարող ենք փաստել, որ ՀՀ օրենսդրությունը զարգացել է գործի՝ դատարանում հարուցման խառը ինստիտուտով՝ ներառելով թե՛ հայցատեսակներով պայմանավորված իրավական ռեժիմի նախնական ընտրությունը, թե՛ իրավական վեճի բնույթով պայմանավորված դատարան դիմելու իրավունքը: Միևնույն ժամանակ ՎՂՕ-ն սահմանափակել է դատարան դիմելու անձի իրավունքը՝ գործի հարուցման հիմք սահմանելով հայցը և որպես վարչական հայցի հնարավոր տեսակներ առանձնացնելով չորս վարչական հայցեր՝ առանց հնարավոր բացառությունների: Փաստորեն՝ ՎՂՕ-ն բովանդակային տեսանկյունից դատարան դիմելու իրավունքը կապում է հայցապահանջի էության հետ, սակայն ձևական առումով սահմանափակում է անձի՝ դատարան դիմելու ի-

¹ St̄u Loll D. und Schutt H., Das offentliche Recht und Wirtschaftswissenschaftler. Ein klausurorientiertes Lehrbuch, 2004, էջ 48-50:

² https://www.gesetze-im-internet.de/englisch_vwgo/englisch_vwgo.html

³ <https://matsne.gov.ge/en/document/view/16492?publication=77>

⁴ St̄u Чантурия Л., Система и компетенция административных судов в Грузии. <http://refdb.ru/look/2552342.html>, 12.04.2019:

⁵ <https://adilet.zan.kz/eng/docs/K2000000350>

⁶ <https://www.global-regulation.com/translation/ukraine/570127/the-code-of-administrative-procedure-of-ukraine.html>

⁷ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/

⁸ St̄u **Չիլինգարյան Ա.**, Վարչական հայցերի դասակարգման հիմնախնդիրները // ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2) 2018, 2019թ., ԵՂՀ հրատ., էջ 374-375, <http://publications.y-su.am/wp-content/uploads/2015/06/364-377.pdf>:

րավունքը կոնկրետ հայցատեսակների ընտրության հնարավորությամբ, ինչը ըստ էության խախտում է անձի՝ արդար դատաքննության իրավունքը՝ միևնույն ժամանակ անհավասար պայմաններ ստեղծելով տարբեր սուբյեկտների համար: Նման պայմաններում օրենսդրական փոփոխությունների հրամայականն այլընտրանք կարծես թե չի թողնում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ օրենսդրական փոփոխությունները, որոնք կնախատեսեն համատեղ գործող երկու ինստիտուտ՝ հատուկ հայցատեսակներով և ընդհանուր հայցային կարգով, հստակ դատավարական ժամկետներով և սուբյեկտային կազմով, պետք է հանգեն հետևյալին.

1. ՎՂՕ-ն անհրաժեշտ է լրացնել նոր գլխուխներով՝ դրանց շրջանակում կարգավորելով *«վարչական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով գործերի վարույթը»* և *«վարչական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով գործերի վարույթը»*՝ **որպես հատուկ վարույթներ:**

2. Օրենսդրությամբ հարկ է տարբերակված մոտեցում ցուցաբերել հատուկ հայցային և ընդհանուր հայցային կարգերի նկատմամբ: Ղատարանը կարող է և պետք է որոշի այն իրավական ռեժիմը, որով քննության առարկա պիտի դարձնի կոնկրետ հայցապահանջը, սակայն օրենքով չնախատեսված հայցատեսակներով ներկայացված հայցապահանջները չպետք է հարմարեցվեն և քննվեն սահմանված հայցատեսակների ռեժիմներով՝ հաշվի առնելով վերը քննարկված իրավական խնդիրների հնարավոր առաջացումը: Ղատարան դիմելու հնարավորությունը օրենսդրական մակարդակով չպետք է սահմանափակվի հայցատեսակների շրջանակով, օրենսդիրը պետք է նախատեսի ընդհանուր բացառություն հայցատեսակների քննությունից, եթե այն նախատեսված է 3-րդ հոդվածով սահմանված գործերի շրջանակում: **Սույնով պայմանավորված՝ անհրաժեշտ է փոփոխել ՎՂՕ 3-րդ հոդվածը՝ լրացնելով այն նոր՝ 7-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ.** *«(...) 7. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված, ինչպես նաև վարչական դատարանին ընդդատյա, սույն հոդվածով սահմանված, սակայն հատուկ հայցատեսակներին և հատուկ վարույթներին չհամապատասխանող գործերի հարուցումը վարչական դատարանում իրականացվում է ՎՂՕ 65-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ընդհանուր հայցային կարգով»:*

3. **Լրացնել ՎՂՕ 65-րդ հոդվածը նոր՝ 2-րդ և 3-րդ մասերով՝ հետևյալ խմբագրությամբ.**

«Հոդված 65. Վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը

1) (...):

2) *Վարչական դատավարությունում հայցը սահմանվում, սակայն չի սահմանափակվում վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցատեսակներով:*

3) *Վարչական դատարանում գործի հարուցումը սահմանափակված չէ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցատեսակներով: Այն դեպքերում, երբ գործը ընդդատյա է վարչական դատարանին, սակայն հայցապահանջը չի համապատասխանում հատուկ հայցատեսակներից որևէ մեկին և ենթակա չէ հատուկ վարույթի կարգով քննության, գործը քննվում է ընդհանուր հայցային կարգով»:*

4. **ՎՂՕ 72-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ.**

«3. Ընդհանուր հայցային կարգով քննվող գործերով հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել եռամսյա ժամկետում՝ այն պահից, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իմացել է կամ պետք է իմանար իրավախախտման մասին»:

5. ԿՂՕ 5-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրել՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի շրջանակներում ավելացնելով *դատարանի լիազորությունը՝ ընդհանուր հայցապահանջներով ներկայացվող գործերով որոշելու գործի քննության ռեժիմը, ապացուցման պարտականության կանոնները, ինչպես նաև դատական ակտով լուծման ենթակա հարցերը՝ այն չկատարելով և չնույնացնելով կոնկրետ հայցատեսակի հետ, միևնույն ժամանակ տալով հնարավորություն, այն դեպքում, երբ հայցապահանջը կհամապատասխանի որևէ հայցատեսակի, քննությունը շարունակել տվյալ հայցատեսակի ռեժիմով, եթե անձն ի սկզբանե պահպանել է կոնկրետ հայցատեսակով դատարան դիմելու ժամկետները*:

ОСНОВЫ РАССМОТРЕНИЯ ДЕЛ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ ПО ВИДАМ ИСКОВ, НЕПРЕДУСМОТРЕННЫХ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ¹

Гоар Авагян

Аспирант кафедры гражданского процессуального права ЕГУ

Одним из эффективных законодательных инструментов и важных гарантий эффективной судебной защиты и реализации права на справедливое судебное разбирательство, а также верховенство права/закона является надлежащее регулирование института иска на законодательном уровне. Стадия возбуждения дела в административном судопроизводстве характеризуется определением видов исков, которые в условиях административного судопроизводства РА ограничивают возможность обращения лица в суд, что приводит к ряду проблем на научно-практическом уровне. В статье предметом изучения стали такие вопросы, которые приводят к раскрытию назначения института иска, проблемам соотношения права на справедливый суд и применимости института иска, роли суда в рамках выбора исков, а также рассмотрение в суде тех исков, которые не соответствуют видам исков, определенным Административно-процессуальным кодексом РА, в том числе требования, предъявляемые государственными органами, в контексте вышеизложенного, выявление законодательных пробелов и предложение решений в виде правовых норм. Значительная часть статьи также посвящена анализу лучших международных практик и моделей, используемых в разных странах, и оценке вероятности их применимости в правовой системе РА.

¹ Статья было представлена 8 декабря 2022г. на научной конференции аспирантов и соискателей юридического факультета Ереванского государственного университета.

FUNDAMENTALS FOR CONSIDERATION OF CASES IN ADMINISTRATIVE PROCEEDINGS FOR TYPES OF CLAIMS NOT PROVIDED BY LEGISLATION¹

Gohar Avagyan

Ph.D. student at the YSU Chair of Civil Procedure

One of the effective legislative guarantees of addressing the right to effective judicial protection and fair trial is the proper regulation of the claim institute. The stage of bringing an action in administrative proceedings is characterized by the definition of the types of claims, which within the context of the administrative proceedings of the RA, limit the right of the person to apply to the Court, which leads to a number of problems at the scientific-practical level. The article discusses such questions, that lead to the disclosure of the origin of the claim institute in the administrative procedure, the problems of the ratio between the right to a fair trial and the applicability of the institute of claim, the role of the court within the context of the selection of the proper claim type, as well as the consideration in court of those claims that do not correspond to the types of claims determined by the Administrative procedural code of the RA, including the claims brought by state bodies, and study of legislative gaps. A significant part of the article is also devoted to the analysis of foreign experience and models used in different countries.

Բանալի բառեր – Հայցի ինստիտուտ, հայցատեսակներ, պատշաճ հայցատեսակ, օրենքով չնախատեսված հայցատեսակ, գործի հարուցումը վարչական դատավարությունում, պետական մարմինների կողմից ներկայացվող հայցապահանջներ, հատուկ վարույթ:

Ключевые слова: *Институт иска, виды иска, надлежащий вид иска, вид иска не предусмотренный законом, возбуждение дела в порядке административного производства, иски представляемые государственными органами, особые производства.*

Key words: *Institute of claim, types of claim, proper type of claim, type of claim not provided by law, bringing an action in the administrative proceedings, claims submitted by state bodies, special proceedings.*

¹ This article was reported in 2022 December 8 at the scientific session of graduate students and applicants at the YSU Faculty of Law.